ռազգի քարոզիչներից, որքան նրանց ձեռքում գործիք դարձած կոյր, մոլեռանդ եւ դատարկամիտ հայ գործակատարներից:

— Ես կրօնի եւ ազգային եկեղեցու պաշտպան չեմ, — առաջ տարաւ երիտասարդը, — բայց դարձեալ կասեմ, որ այդ մարդիկ աւելի վնասակար են, քան թէ քուրդը կամ տաճիկը: Քուրդը եւ տաճիկը յափշտակում են հայերից նրանց ձեռքի վաստակը, իսկ այդ կորուստը կարելի է աշխատանքով կրկին լրացնել: Բայց քարոզիչները, այդ հոգեւոր հարստահարիչները, Աւետարանի ճշմարտութեան անունով սպանում են ազգայնութիւնը. դա անփոխարինելի է:

— Ինչպէ՞ս, — հարցրեց Սագօն, լցնելով իմ բաժակը գինիով, իսկ իր երկու խօսակիցների ֆինջանները՝ օղիով:

— Այնպէս, — պատասխանեց երիտասարդը, վառելով իր կարճ ճանապարհորդական ծխաքարշը եւ թողնելով մուխի թեթեւ կոյտեր իր դողդոջուն շրթունքների միջից, որ դեռ նոր էին սեւանում նորաբոյս մազերով: — Օրինակի համար, վեր առնենք հէնց այն երկրները, ուր մենք գործում էինք եւ որտեղից մեզ հալածեցին. այդ կողմերում հայերը կորցրել են իրանց մայրենի լեզուն եւ խօսում են քրդերէն, կորցրել են իրանց ազգային այլ առանձնայատկութիւնները եւ ապրում են քրդական սովորութիւններով, մի խօսքով, ոչնչով չեն տարբերւում քրդերից: Մնում է մի յօդ միայն, որ նրանց կապում է ազգային ամբողջութեան հետ եւ նրանց յիշեցնում է, թէ իրանք հայեր են, այդ յօդը Հայաստանեաց եկեղեցին է: Իսկ եթէ եկեղեցիից եւս կը տրոեցան, այլեւս ի՞նչ կապ կը մնայ նրանց եւ հայութեան մէջ:

— Ոչինչ կապ չի մնայ, — պատասխանեց Սագօն այնպիսի մի եղանակով, որ կարծես շտապում էր լսել երիտասարդի վերջին խօսքը:

— Ահա այդ վնասն են հասցնում բողոքական քարոզիչները, ահա դրանով են սպանում նրանք ազգայնութիւնը, — շարունակեց նա փոքր-ինչ տաքացած կերպով, — հային խլելով իր ազգային եկեղեցու գրկից, դարձնում են նրան բողոքական քուրդ, եւ աւելի ոչինչ:

— Դրանում ի՞նչ զարմանալի բան կայ, — հարցրեց Սագօն, գլուխը վեր բարձրացնելով եւ ուղիղ երիտասարդի երեսին նայելով: — Դուք մի րոպէ առաջ ասեցիք, թէ տեղային հայերը կորցրել են իրանց մայրենի լեզուն, խօսում են քրդերէն, կորցրել են իրանց ազգային առանձնայատկութիւնները եւ ապրում են քրդական սովորութիւններով, այլեւս ի՞նչ իրաւունքով դուք նրանց հայեր էք կոչում: Նրա համա՞ր միայն, որ պատկանում են լուսաւորչական եկեղեցուն: Հէնց դրա մէջն է սխալը, որ ձեզ սխալ եզրակացութեան է